«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ:

ԵՆԹԱԹԵՄԱ՝ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ Ի՞ՆՉ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ Է ԶԱՐԳԱՑՆԵԼ:

ԱՌԱՐԿԱՆ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ……...…...…...…...……5

1.1Կրտսեր դպրոցականի տարիքային և հաղորդակցական առանձնահատկությունները……..……..…..……5

1.2 Միջանձնային հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողությունների ձևավորման գործում……...…..……11

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ……18

2.1 Հետազոտության արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը……...……18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……...……28

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……..29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը

Հաղորդակցումը սերունդների միջև կապի ապահովման հնարավորություն է, երբ ոչ թե պարզապես շփվում են ուսուցիչը և աշակերտը, սովորողն ու սովորեցնողը, այլ տեղի է ունենում տարբեր սերունդների, տարբեր մտածողությունների, տարբեր մշակույթների կրողների երկխոսություն:

Ժամանակակից դպրոցի խնդիրներից մեկը երեխայի հարմարումն է միջավայրին: Ուսուցչի խնդիրը ոչ միայն դպրոցականների կողմից որոշակի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովումն է, այլև նրանց մեջ անձնային որոշակի որակների, խորը համոզմունքների, զգացմունքների, սովորությունների, արժեհամակարգի ձևավորումը, որոնք կհամապատասխանեն արդի հասարակության պահանջներին և բարայական նորմերին: Ողջ մանկավարժական գործընթացը կազմակերպվում և կառուցվում է ուսուցման և դաստիարակության գործընթացների միասնությամբ, ինչն էլ հնարավոր է իրականացնել հաղորդակցման միջոցով:

Հաղորդակցման գործընթացում խոսքն այն հիմնական միջոցն է, որի օգնությամբ մարդիկ փոխանցում են տեղեկություններ, արտահայտում իրենց զգացմունքները, գնահատում իրավիճակները, շփվում, միմյանց միջև կապեր ու հարաբերություններ հաստատում: Այն՝ մտքերի, զգացմունքների միջոցով ոչ միայն հաղորդում է որոշակի տեղեկություն, այլ մարդուն մղում է դեպի այս կամ այն արարքները, նրան համոզում է, հրամայում, խորհուրդ տալիս, կանխում որոշ գործողություններ և այլն: Այսինքն՝ խոսքը մարդկանց հաղորդակցման, ինչպես նաև դրա մասնակիցների սոցիալական կարգավիճակի հաստատման միջոցներից մեկն է:

Ուսումնասիրվող թեման արդիական է, քանի որ հաղորդակցումը երեխայի սոցիալական և հոգեբանական զարգացման հիմնական գործոններից է և մանկավարժի հետ հաղորդակցման միջոցով է երեխան կրթվում, դաստիարակվում և ձևավորվում: Հաղորդակցման ընթացքում և արդյունքում են ձևավորվում երեխայի այնպիսի անձնայի ն որակներ, ինչպիսիք են՝ ինքնահարգանքը, ապրումակցումը, գթասրտությունը, հանդուրժողականությունը, այնպիսի ունակություններ, ինչպիսիք են՝ ունկնդրելու, հարցեր տալու, տեսածը և լսածը վերլուծելու, երևակաելու կարողությունները:

Դպրոցականի անձի զարգացման համար մեծ նշանակություն ունի հաղորդակցական կարողությունը, քանի որ այն նպաստում է սովորողի սոցիալականացման գործընթացի ապահովմանը: Հաղորդակցումը դպրոցականի այն կարողությունն է, որով նա բնականոն փոխհարաբերություններ է հաստատում հասակակիցների, մեծահասակների հետ, ինչն էլ նպաստում է սովորողի սոցիալականացման գործընթացի ապահովմանը:

Ցանկացած մարդ պետք է ունենա հաղորդակցման միջավայր՝ բարեկամներ, ընկերներ, հարազատներ, որոնց հետ հնարավոր է քննարկել առօրյա խնդիրները, հետաքրքիր դեպքերն ու դիտած կինոնկարները: Ցավոք ոչ միշտ է գիտակցվում, որ հաղորդակցման միջավայրի բացակայությունը կարող է հանգեցնել համացանցային կախվածության առաջացմանը:

Հաղորդակցման միջավայրը առաջին հերթին ընտանիքն է , ընտանեկան մթնոլորտն ու ընտանիքում կրտսեր դպրոցականի հասկացվածությունը, բարյացակամ հարաբերությունները, գնահատված լինելն ու փոխադարձ հարգանքը: Քանի որ հաղորդակցումը կրտեր դպրոցական տարիքում փոխադարձ գործընթաց է: Հաղորդակցման առավել բնորոշ պահը ուրիշի հետաքրքրությունն առաջ բերելու, ինքն իր վրա ուշադրություն հրավիրելու ցանկությունն է:

Հաղորդակցումը պետք է կապված լինի երեխաների հետաքրքրությունների, հակումների, հնարավորությունների հետ: Միայն երեխայի հետաքրքրությունների համապատասխան և հույզերի հետ կապված ուսումնադաստիարակչական գործընթացը կարող է հաղթահարել երեխայի ձանձրույթը և ապահովել սուբյեկտիվության հավասար մակարդակներ բոլորի համար:

Հաղորդակցումը երեխայի սոցիալականացման հիմքն է, այն հենքային կարողություն է, որով կրտսեր դպրոցականը բնականոն փոխհարաբերություններ է հաստատում հասակակիցների և մեծահասակների հետ:

Հետազոտության նպատակը ՝ դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի ուսումնասիրությունն ու արդյունավետ միջոցների մշակումն է:

Հետազոտության խնդիրները՝

1.Բացահայտե՛լ և ուսումնասիրել դպրոցականի տարիքային և հաղորդակցական առանձնահատկությունները:

2.Վերլուծե՛լ դպրոցականի հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացը:

3.Մշակե՛լ դպրոցականի հաղորդակցական կարողությունների ձևավորման մոդել:

ԳԼՈՒԽ 1

1.1.ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հաղորդակցման պահանջմունքը բնածին չէ. այն ծագում է կյանքի ընթացքում շրջապատի հետ փոխազդեցությամբ, կենսափորձի փոխանակման կամ նոր փորձառության ձեռքբերման պահանջմունքով և այլն :

Որպես կանոն մարդիկ շփվում ու հաղորդակցվում են ամենատարբեր նպատակներով, ինչպես նաև տարբեր ձևերով՝ կախված իրավիճակից: Պայմանավորված հաղորդակցության նպատակից, տեղից, ժամանակից և խոսակցից՝ ընտրվում է շփման և հաղորդակցման տարբեր ձևեր ու միջոցներ : Հենց այդ հանգամանքով էլ պայմանավորված շփումն ու հաղորդակցումը կարող է լինել.

- ✓ խոսքային (վերբալ) կամ ոչ խոսքային (ոչ վերբալ) ,
- ✓ բանավոր կամ գրավոր ,
- ✓ միջանձնային կամ զանգվածային ,
- ✓ մտերմիկ կամ գործնական , պաշտոնական և այլն:

Տարրական դպրոցի տարբեր դասարաններում, պայմանավորված տարիքային առանձնահատկություններով, նպատակահարմար է շեշտը դնել շփման ու հաղորդակցման տարբեր տեսակների վրա, որպեսզի երեխաները սովորեն ոչ միայն տարբերակել , այլև տեղին կարողանան օգտագործել շփման և հաղորդակցման տարբեր ձևերը:

Հաղորդակցումը ուսուցման ընթացքում ենթադրում է ուսուցիչ-աշակերտ , աշակերտ-աշակերտ փոխգործունեություն , որի նպատակն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, ինչը խթանում է անձի լիարժեք զարգացումը : Տարրական դասարաններում աշակերտների հաղորդակցման կարողությունների ուղղությամբ կատարվող աշխատանքներում հիմնական շեշտը նախ պետք է դնել բանավոր խոսքի վրա, քանի որ երեխայի մոտ դեռևս թույլ է զարգացած գրավոր խոսքը : Բացի դա, բանավոր հաղորդակցման միջոցով մարդիկ միմյանց փոխանցում են մարդկային հույզերը, ապրումները, տրամադրություններն ու զգացմունքները:

Մեր մանկավարժական պրակտիկայի, փորձարարական դասերի, ինչպես նաև հատուկ նպատակներով իրականացված դասալսումների արդյունքում եկանք այն եզրահանգման, որ երեխաների հաղորդակցական կարողությունների զարգացման արդյունավետ միջոցներից են հաճախակի ինտերակտիվ դասեր, բանավեճեր, խմբային աշխատանքներ կազմակերպելը, այսինքն ստեղծել իրավիճակներ, որպեսզի աշակերտները կարողանան արտահայտել իրենց մտածածը, կարծիքը, որոնք էլ խոսքի զարգացման կարևորագույն նախապայմաններից է:

Հաղորդակցական պահանջմունքը վերագրում են անձի ձևավորման կարևորագույն պայմաններից մեկին և դիտարկվում է որպես անձի սոցիալմշակութային միջավայրի փոխգործունեություն, ընդ որում՝ վերջինը տվյալ պահանջմունքի աղբյուրն է: Հաղորդակցումը կարևորագույն սոցիալական պահանջմունք է, առանց որի դանդաղում է, այնուհետև դադարեցվում է անձնավորության ձևավորումը: Մարդը միշտ ունի այլ մարդկանց հետ հաղորդակցման պահանջմունք, որն էլ ապացուցում է, որ հաղորդակցումը կենսագործունեության պայման է: Մեր ժամանակներում հոգեբանները, մանկավարժները և սոցիոլոգները նշում են, որ երեխաների անմիջական միջանձնային շփումների վատթարացման մասին՝ սկսած սոցցանցերի առաջացումից և տարածումից: Համակարգչային հաղորդակցումը ընկերական հարաբերությունները դարձնում է երևակայական, երեխային դարձնում է անպատասխանատու հաղորդակցման մեջ:

Դպրոցական տարիքի մի շարք խնդիրներ կապված են երեխայի ուսուցման գործընթաց մտնելու հետ և որպես շփման համակարգված ձև, ուսուցման գործունեություն, այդ ժամանակահատվածում դառնում է առաջատար, անցում է կատարվում գրաֆիկական մտածողությունից վերացական մտածողության:

Դպրոց ընդունվող երեխայի մեջ շրջապատող մարդկանց փոխհարաբերություններում տեղի են ունենում փոփոխություններ: Զգալիորեն մեծանում է շփմանը հատկացված ժամանակը:

Օրվա մեծ մասը երեխաներն անցկացնում են շրջապատող մարդկանց հետ շփվելով՝ տարեկիցների, ուսուցիչների և այլ մարդկանց հետ: Շփման բովանդակությունը փոխվում է՝ նրա մեջ չեն մտնում խաղերի հետ կապված թեմաներ,

գերակշռում է գործնական շփումը: Առաջին դասարանում սովորողները ավելի շատ են շփվում ուսուցիչների հետ, ավելի շատ հետաքրքրություն են ցուցաբերում, քան թե հասակիցներին, քանի որ ուսուցիչը նրանց համար հեղինակություն է. Աշակերտներն անվերապահորեն ընդունում են ուսուցչի ամեն խոսքը, ուստի այն պետք է լինի գրագետ և ընդօրինակելի: Աշակերտներն ուսուցչի հետ շփվելիս երբեմն ընդօրինակում են նրա խոսքը, շարժումները, դիմախաղը: Ուսուցչի խոսքը բոլոր ժամանակներում հզոր զենք է եղել կրտսեր դպրոցականների հաղորակցական կարողությունների ձևավորման և զարգացման համար: Ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորումն անդրադարձել են դեռևս Հին հունաստանում և Հին Հռոմում: Կան բազմաթիվ աշխատություններ, որոնք նվիրված են ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորմանը և զարգացմանը: Ն.Գ. Չերնիշևսկին սահմանել է, որ ուսուցչի խոսքը դաստիարակության կարևոր միջոցներից մեկն է: Նրա կարծիքով ուսուցչի խոսքը երեխաների համար պետք է լինի պարզ և հասկանալի, բայց ոչ պարզեցված: Մեր հետազոտությունների արդյունքում եկել ենք այն համոզման, որ ուսուցիչ-աշակերտ շփման բնույթի արտաքին փոփոխությունների (խոսքի, դիմախաղի, վարվելակերպի ընդօրինակում) հետ մեկտեղ տեղի է ունենում նաև ներքին փոփոխություններ, որոնք արտահայտվում են շփման թեմաների և դրդապատճառների փոփոխությամբ: Եթե առաջին դասարանում հաղորդակցական գործընթացը բնորոշվում է հիմնականում ուսուցչի գնահատականով, ուսման մեջ հաջողությամբ, 3-4-րդ դասարաններում ամեն ինչ փոխվում է, ուսուցիչը աշակերտների համար դառնում է պակաս նշանակալից և հեղինակավոր անձնավորություն, աճում է նրանց հետաքրքրությունը հասակակիցների նկատմամբ, որն աստիճանաբար ավելանում է միջին և բարձր դպրոցական հասակում, ի հայտ են գալիս միջանձնային ընտրության այլ դրդապատճառներ, որոնք կապված են հաղորդակցական գործընթացի անձնական որակների անկախ գնահատական տալով: Կրտսեր դպրոցական տարիքում շփման մշակույթի յուրացումը թույլ է տալիս հետագայում ավելի ինքնահիրացվել: Մանկավարժներին և հոգեբաններին անհրաժեշտ է վերահսկել կրտսեր դպրոցականների շփումը և անհրաժեշտության դեպքում անցկացնել շտկման զարգացման աշխատանքներ: Կ.Դ. Ուշինսկին իր աշխատություններից մեկում նշում է, որ ուսուցիչն իր խոսքը կառուցելիս չպիտի գործածի բառեր, որոնց աշակերտներն անծանոթ են: Խոսքի զարգացման ընթացքում պետք է անընդհատ փոխանակվել

հարցերով: Ուսուցչին տրվող հարցերի պատասխանները պարզեցված չպետք է լինեն երեխաների համար, պետք է որոշակի անհայտ կողմ մնա, որպեսզի նրանք փնտրեն գտնեն, չբավարվեն միայն ուսուցչի տված պատասխանով: Ուսուցիչը պետք է ընտրի մի բառ, որն առավել պատասխանատու է հաղորդածի նպատակի համար:

Վ. Ա. Սուխոմլինսկին գրել է, որ ես հավատում եմ «բառի» դաստիարակության անսահման ուժին, որի միջոցով մենք՝ ուսուցիչներս, պետք է վարպետորեն մոտենանք երեխաների սրտին: Դաստիարակչական աշխատանքի մարգարեությունը շատ դպրոցներում խոսքային է, միջոց է արտահայտելու զգացմունքները, հույզերը: Հետևաբար, կարելի է հավելել, որ ուսուցչի խոսքն անփոխարինելի գործիք է ուսումնական գործընթացում: Դաստիարակության արվեստն իր մեջ ներառում է խոսելու արվեստը, որովհետև գործ ունենք մարդկային սրտի հետ: Շատ դպրոցական կոնֆլիկների աղբյուրները կապված են ուսուցչի խոսքի «անկարողության» հետ:

Ինչպես ցույց է տվել գրականության վերլուծությունը, հաղորդակցումը ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝

- շրջապատի կապի մեջ մտնելու հետ ցանկություն, շփման կանոնների իմացությունը. («ես ուզում եմ»),
- շրջապատի հետ կանոնների իմացությունը. («ես գիտեմ»),
- հաղորդակցումը կազմակերպելու ունակություն. («ես կարող եմ»),

Դրա համար ուսուցչի առջև նպատակ է դրված սովորեցնել երեխաներին շփվել, միմյանց հետ համագործակցել, անհրաժեշտության դեպքում զարգացնել շփման ունակությունները և կարողությունները:

Ձևավորելով դպրոցականների հաղորդակցական հմտությունները ուսուցիչը պետք է հետևի հետևյալ կանոններին.

- սովորեցնել երեխաներին ճիշտ բաշխել դերերը միասնական գործունեության մեջ և կատարել իր պարտականությունները,
- հասարակական գործունեության մեջ լինել առաջնորդ (լիդեր),
- պահպանել սահմանված կանոնները, լինել բարեխիղճ,
- մշակել միմյանց հետ հաղորդակցվելու կարողություններ, հաստատելու և պահպանելու լավ փոխհարաբերություններ,
- կոլեկտիվում ստեղծել բարենպաստ, զգացմունքային պայմաններ,

- յուրաքանչյուր երեխայի սովորեցնել լինել ինքնուրույն թե՛ խմբում, թե՛ կոլեկտիվում,
- ճիշտ պահել քննարկումների ժամանակ, արտահայտել սեփական կարծիքը և լսել ուրիշների կարծիքները, ապացուցել քո դիրքորոշումը և խոստովանել դիրքորոշման ճշտմարտացիությունը,
- սովորեցնել կոնֆլիկտը միջանձնային հարաբերությունների ոլորտում կանխելու և հաղթահարելու մեխանիզմներ:

Մանկավարժը դպրոցականների հետ աշխատանքի ընթացքում պիտի կիրառի տարբեր ձևեր, մեթոդներ և հնարներ, որոնք կնպաստեն շփման գործընթացի բոլոր բաղադրիչների զարգացմանը: Հարկ է նշել, որ շփման հնարների ձևավորումը իրականացվում է անձի ամբողջական համակարգի ներսում, անձնային, մտավոր, գործնական գծերի զարգացման հետ համատեղ, որոնք իրարից անբաժանելի են:

Հաղորդակցման գործընթացում խոսքն այն հիմնական միջոցն է, որի օգնությամբ տեղի է ունենում հաղորդակցում: Խոսքի միջոցով մարդիկ փոխանցում են տեղեկություններ, արտահայտում իրենց զգացմունքները, գնահատում իրավիճակները, շփվում, միմյանց միջև կապեր ու հարաբերություններ հաստատում: Այն՝ մտքերի, զգացմունքների միջոցով ոչ միայն հաղորդում է որոշակի տեղեկություն, այլ մարդուն մղում է դեպի այս կամ այն արարքները, նրան համոզում է, հրամայում, խորհուրդ տալիս, կանխում որոշ գործողություններ և այլն: Այսինքն՝ խոսքը մարդկանց հաղորդակցման, ինչպես նաև դրա մասնակիցների սոցիալական կարգավիճակի հաստատման միջոցներից մեկն է [6, էջ 45]:

Խոսքը գործունեություն է, հաղորդակցման գործընթաց, որը կատարվում է լեզվի, այսինքն՝ հաղորդակցման միջոցների որոշակի համակարգի օգնությամբ: Լեզվի միջոցով հաղորդակցումն իրականանում է մտքերի, զգացմունքների արտահայտման շնորհիվ՝ խոսողի կամ գրողի կողմից, և այդ մտքերն ու զգացմունքներն ընկալողի՝ լսողի կամ կարդացողի կողմից:

Կարևորելով խոսքի դերը անձի զարգացման, ձևավորման և կայացման գործընթացում՝ ուսումնական գործընթացում առաջնահերթ տեղ է տրվում հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, ինչն իրականացվում է տարաբնույթ մեթոդների և միջոցների կիրառմամբ: Առհասարակ՝ մեթոդ (metodos) բառը հունարենից թարգմանանաբար նշանակում է ուղի, ճանապարհ: Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն մեթոդի բազմաթիվ

սահմանումներ, որոնցում այն նկարագրվում է որպես նպատակին հասնելու ուղի, ճանապարհ, աշակերտի և ուսուցչի համատեղ գործունեություն և այլն: Այսինքն՝ մեթոդի միջոցով ուսումնասիրվելիք նյութը հրամցվում է աշակերտներին:

Գոյություն ունեն բազմաթիվ և բազմազան մեթոդներ, որոնք կիրառվում են ուսումնական գործընթացի տարբեր փուլերում: Եվ քանի որ ուսուցումը հիմնված է խոսքի տիրապետման գործընթացի վրա, թե ինչ է կատարվում ուսուցման ժամանակ և ինչ գործողություններ ու խնդիրներ են իրականացնում ուսուցանվողները, ուստի կարևոր է ընտրել տվյալ գործընթացին համապատասխան մեթոդներ և միջոցներ: Ուսումնական ծրագրերը, որոնք կազմված են այդ մեթոդով, իրենցից ներկայացնում են հաղորդակցական կարողությունների ամբողջություն, որտեղ բացակայում են խոսքային հստակ գործառույթները, թեմաները, քերականական կառույցները և խոսքային միավորները, որոնց պետք է տիրապետի ուսուցանվողը:

Ուսումնական գործընթացն ու ուսուցումն իրենցից ներկայացնում են մի շարք հաղորդակցական խնդիրների լուծման համակարգ, որոնք առաջ է քաշում ուսուցիչը և որոնց լուծման մասնակիցներն իրականացնում են խոսքային և ոչ խոսքային գործողություններ, ներգրավվում են շփման մեջ ուսուցչի կամ դասարանական խմբի հետ՝ փորձելով գտնել հաղորդակցական խնդիրների ճիշտ լուծման ճանապարհներ: Այդ իսկ պատճառով հաղորդակցման գործընթացում հաճախ կիրառում են ոչ միայն խոսքային, այլև՝ ֆիզիկական գործողություններ, ժեստեր, դիմախաղ և այլն:

Ուսուցման մեթոդներն իրականացնում են բազմակի գործընթացներ: Դրանցից գլխավորն են՝ ուսուցողականը, դրդապատճառայինը, զարգացնողը, դաստիարակողը, կազմակերպչականը: Այս մեթոդների օգնությամբ ուսուցիչը ոչ միայն սովորեցնում, այլ նաև որոշում է դրդապատճառի հարցերը, կատարում է դաստիարակչական գործունեություն, ազդում ուսումնադաստիարակչական գործընթացի վրա: Գոյություն ունեն բազմաթիվ ուսուցման մեթոդներ, որոնք տարբեր նպատակներ են հետապնդում: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն անհրաժեշտ է ճիշտ ընտրել տվյալ դասին համապատասխան ուսուցման մեթոդը, քանի որ ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մեթոդի ճիշտ ընտրությունից և կիրառությունից: Մեթոդի ընտրությունը, որպես կանոն, պետք է բխի ուսուցանող նյութի նպատակից, աշակերտների տարիքային

առանձնահատկություններից, որոնցով էլ պայմանավորված՝ ուսուցման մեթոդները դասակարգվում են:

Մասնագիտական գրականության մեջ տարբեր հեղինակներ անդրադարձել են ուսուցման մեթոդների դասակարգմանը՝ յուրաքանչյուրը ներկայացնելով մեթոդների դասակարգման իր տարբերակը:

Գերմանացի դիտակտ Լ. Կլինգբերգն առանձնացրել է մեթոդները՝ զուգակցելով համագործակցային ուսուցմանը.

ա) մենախոսության մեթոդ՝ պատմում, ցուցադրում,

բ) համագործակցային ձևեր՝ անհատական, խմբային, դիմային, կոլեկտիվ,

գ) երկխոսության մեթոդ՝ զրույցներ:

Լեհ գիտնական Կ. Սոսնիցկին նշում է, որ գոյություն ունի ուսուցման 2 մեթոդ, դրանք են՝ արհեստականն ու բնականը, որոնց համապատասխանում է ուսուցման 2 եղանակ՝ մատուցվող և փնտրվող [5, էջ 15]:

Ուսուցման գործընթացում մեթոդների կիրառումը միշտ չէ, որ հստակ դասակարգումով է կիրառվում: Քանի որ կան մի շարք գործոններ, որոնցով էլ պայմանավորված խախտվում է դասակարգումը: Այդ գործոններն են՝ դասարանում աշակերտների քանակը, մանկավարժական պայմանները, տարիքային առանձնահատկությունները, դասի նպատակները, ուսուցչի վարպետությունը: Սակայն կան մեթոդներ, որոնց տարատեսակները գրեթե բոլոր դասակարգումներում կան, օրինակ՝ բանավոր ներկայացման մեթոդը: Վերջինս՝ իր տարատեսակներով, առավել շատ կիրառվում է տարրական դասարաններում: Բանավոր ներկայացման մեթոդի տարատեսակներն են՝ պատմումը, զրույցը, բանավեճը, բացատրությունը:

Նշված մեթոդները կիրառելի են ուսուցման գործընթացի բոլոր փուլերում՝ նպաստելով հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

Այն մեթոդների կիրառումը, որոնք նպաստում են կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացին, պայմանավորված է որոշակի ծրագրված աշխատանքով՝ ուսուցչի հսկողությամբ, որը կազմված է հետևյալ փուլերից.

1-ին փուլ՝ տարրական հաղորդակցական հմտությունների յուրացում. աշակերտներին ներառել դասարանական շփման գործընթացում, պատասխանել հարցերին՝ տալով սպառիչ պատասխան, ըստ թեմայի հարցադրումներ կատարել,

մեկնաբանել հարցերն ու պատասխանները, հաղորդագրություններ գրել, պատմել տրամաբանորեն և հերթականությամբ:

2-րդ փուլ աշակերտի կողմից՝ խոսքի սահուն և հստակ արտաբերում. կարողանալ հստակ արտահայտել սեփական կարծիքը, խոսքում կիրառել օրինակներ խոսակցության թեմայի վերաբերյալ կարողանալ սեփական միտքն արտահայտել պատկերավոր, հստակ հակիրճ, կարողանալ հռետորական հարցեր կազմել և հնչեցնել, կարողանալ շփման մեջ մտնել դիմացինի հետ, կարողանալ կարգավորել սեփական խոսքի բարձրությունն ու արագությունը:

3-րդ փուլ՝ կարողանալ երկխոսություն անցկացնել, կարողանալ վարել զրույց, կարողանալ կառուցողական երկխոսություն կազմակերպել, կարողանալ կազմակերպել քննարկում և ղեկավարել այն, կարողանալ մասնակցել կոնֆերանսների, խաղերի և մրցույթների:

Հաղորդակցումն առաջին հերթին խոսքն է, որտեղ միավորվում են միմյանց փոխկապակցված գործառույթներ՝ արտահայտիչ, բողոքարկող և պատկերավոր, ուստի և այս գործառույթների իրականացումն էլ սերտորեն կապված է նրա հետ, թե որքան ազատ է երեխան տիրապետում խոսքին: Այդ խոսքային հմտությունների զարգացումը տեղի է ունենում.

- առարկայի բովանդակության ուսուցման միջոցով,
- կիրառական հետազոտական հմտությունների զարգացման միջոցով,
- սոցիալ-հաղորդակցական հմտությունների զարգացման միջոցով [5, էջ 25]:

Մեր հետազոտական աշխատանքների ընթացքում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում եկանք այն համոզման, որ նպատակահարմար է մայրենիի դասերին հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով կիրառել տարաբնույթ խաղային մեթոդներ՝ ստեղծագործական, խոսքային, ուսումնական, դերային, համակարգչային: Գործունեության այս տեսակները խթանում են կրտսեր դպրոցականների ակտիվությունը և հետաքրքրությունը: Նրանք հատկապես հաճույքով են կատարում այն առաջադրանքները, որոնք մատուցվում են տեղեկատվական տեխնոլոգիաներով: Արդյունավետ են նաև գրաֆիկական և հնչյունային իմիտացիայի մեթոդները, պրոբլեմային իրավիճակների ստեղծումը:

Ս.Ա. Կոստինեվիչը ևս նշում է, որ դասերի ժամանակ հուզական- բարենպաստ իրավիճակ ստեղծելու համար անհրաժեշտ է կիրառել խաղային միջոցներ և այնպիսի վարժություններ, որոնք ուղղված են ստեղծագործական երևակայության և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, որոնցից են. առաջին դեմքից պատմելը, հաճոյախոսությունը՝ հեքիաթասացի կամ հեքիաթի հերոսի հասցեին դրական արտահայտվելը, ըստ բանալի բառերի պատմելը, հեքիաթի ավարտի փոփոխությունը: [5, էջ 17]:

Կիսում ենք Ս.Ա. Կոստինեվիչի կարծիքը, քանի որ մեր կողմից մշակված մեթոդական համակարգը, որն ուղղված է կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, ներառված են այնպիսի առաջադրանքներ, որոնք ուղղված են վերոնշյալ կարողությունների զարգացմանը: Մեթոդական համակարգի փորձարկման արդյունքում մենք արձագրեցինք, որ կրտսեր դպրոցականները հաճույքով են կատարում ստեղծագործական բնույթի առաջադրանքները, քանի որ դրանց կատարումը հստակ պատասխաններ չի պահանջում և յուրաքանչյուր աշակերտ անկաշկանդ արտահայտում է իր կարծիքը, մտացածը:

Ուսուցման գործընթացի հիմնական մեթոդներից է զրույցը: Դրա միջոցով ուսուցիչը ներկայացնում է ուսումնասիրվելիք նյութը, հաղորդակցվում է աշակերտների հետ, զարգացնում է նրանց գիտելիքները և այլն:

Ուսուցման գործընթացում հաճախ կիրառվում են խոսքային վարժություններ, որոնք նպաստում են սեփական խոսքային վարքագծի ծրագրավորմանը: Դրանք սովորեցնում են ձևավորել հիմնական միտքը, վերլուծել բովանդակությունը՝ հիմնվելով խոսքային փորձի և հնարավոր կապերի վրա, միևնույն միտքն արտահայտել տարբեր միջոցներով, համապատասխանեցնել միտքը, ժեստերն ու դիմախաղն ըստ հաղորդակցման բովանդակության, հստակ արտահայտել հուզական տեղեկատվությունը, գնահատել հաղորդակցի միտքն ու պատշաճ արձագանքել նրա խոսքերին:

Պետք է նշել, որ խոսքային առաջադրանքների մեթոդը զարգացման շրջանում է և որպես կայացած մեթոդ չի ավարտվել [7, էջ 32]:

Վերջին ժամանակներում լայն տարածում են ստացել թրեյնինգների կիրառումը, որը երնթադրում է, որ յուրաքանչյուր մասնակից պետք է լսի դիմացինի պատմությունը (իրադարձություն, ֆիլմ, դեպք)՝ հետևելով կանոնների՝ լինի ուշադիր,

չընդհատի խոսակցին, ձգտի հասկանալ պատմության իմաստը, խոսակցին հետևի դիմախաղով, ժեստերով, դատողություններով:

Հաղորդակցման կարողությունների զարգացման համար կիրառվում են թրեյնինգի հետևյալ տեսակները. երկու կամ երեք մասնակից դերերով, արտահայտիչ կարդում են նյութը (մեղադրել, համոզել, ներողություն խնդրել), ուշադիր հետևելով ուսուցչի ժեստերին և դիմախաղին՝ որոշել համապատասխանում է արդյոք այն ընթերցվող տեքստին, խոսքով արտահայտել տրված հուզական վիճակը՝ կիրառելով դիմախաղ և ժեստեր (հրճվանք, դժգոհություն, զայրույթ, ուրախություն և այլն), որոշել, թե որտեղ է կետադրական նշանը, զույգերով քննարկել ֆիլմից հատված և այլն:

Այսպիսով, ուսուցման գործընթացում դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է, այդ կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդների և միջոցների լիարժեք կիրառությամբ:

1.2 Միջանձնային հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողությունների ձևավորման գործում

Ժամանակակից պահանջներին համապատասխան անձի ձևավորման զարգացման նպատակը մանկավարժության մեջ առաջ է քաշում մանկավարժական գործընթացի վերանայման, վերաիմաստավորման հետևաբար նաև ժամանակակից մանկավարժական գործընթացում միջանձնային հաղորդակցման նոր հնարավորությունների բացահայտման ու կիրառման խնդիրներ: Այս տեսանկյունից ժամանակակից պահանջներին համապատասխան անձի սոցիալականացման գործընթացում անհրաժեշտ է հաղորդակցական իրական հնարավորությունների ուսումնասիրություն, ինչպես նաև հաղորդակցման տեղի ու դերի բացահայտում այդ գործընթացում:[8, էջ 55]:

Մանակավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է միջանձնային հաղորդակցման իրականացման ուղիներով, տեխնոլոգիաներով, որովհետև անձի և ՛ ձևավորումը, և զարգացումը հաղորդակցման արդյունք են: Այդ են վկայում դեռևս անձի ձևավորման ու զարգացման վերաբերյալ մանկավարժական,

հոգեբանական, սոցիոլոգիական ուսումնասիրություններով ձևավորված ուսմունքներն ու տեսությունները։

Հատկապես միջանձնային հաղորդակցման շնորհիվ է, որ երեխան ոչ միայն ձևավորվում է որպես անձ , այլև ստեղծվում են երեխայի ներուժի բացահայտման, կատարելագործման ու զարգացման պայմաններ։

ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում սահմանվում են հաղորդակցային պարտադիր կարողություններն ու հմտությունները, որոնց պետք է տիրապետի ուսումնառության արդյուքում յուրաքանչյուր սովորող՝

ա/ լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ/բանավիճել բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել;

գ/ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները հասկացությունները և արտահայտությունները,

դ/ հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները;

ե/օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներց և այլն։

Հաղորդակցական կարողությունները պայմանավորված են տվյալ անձի ակտիվության աստիճանով և կարող են անընդհատ զարգանալ՝ իրենց հերթին նպաստելով անձի տարբեր հնարավորությունների և որակների զարգացմանը։

Այսպես, եթե կրտսեր դպրոցականը ձեռք է բերում հաղորդակցման համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ, ապա կարողանում է մասնակցել տարբեր քննարկումներին ակտիվորեն ու ազատ արտահայտել սեփական կարծիքը, անկաշկանդ ինքնադրսևորվել, հանդես գալ տարբեր հիմնավորումներով,չկաշկանդվել բազմապիսի փոխհարաբերություններում և ջեռք բերել նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ։ Հաղորդակցական ակտիվության զարգացումը հատկապես կարևոր է կրտսեր դպրոցական տարիքում, որովհետև այդ տարիքում են դրսևորվում անձի ինքնադրսևորման հնարավորությունները, որոնք կախված միջանձնային հաղորդակցման պայմաններից մանկավարժական գործընթացում կարող են կամ բացահայտվել խթանվել, կամ սահմանափակվել ու այլևս չդրսևորվել ամբողջ կյանքի ընթացքում։ Կրտսեր դպրոցականի հաղորդակցական ակտիվության խթանման ու զարգացման համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա հաղորդակցական, ֆիզիկական , հուզական ու բանական հնարավորությունները, որոնք կազմում են հաղորդակցական

ակտիվության զարգացման նախադրյալները, ինչպես նաև հաղորդակցական պատրաստվածություն՝ գիտելիքները կարողություններն ու հմտությունները, որոնք երեխան ձեռք է բերում հիմնականում գործընթացում և որով էլ պայմանավորված է նրա հաղորդակցական կարողությունների ձևավորման արդյունավետությունը: Դրանք երեխայի հաղորդակցական ակտիվության ձևավորման ներքին գործոններն են: Սակայն հարկ է նշել, որ երեխայի հաղորդակցական ակտիվության ձևավորումը կարող է պայմանավորված լինել մի շարք արտաքին գործոններով ևս: Դրանք են՝ միջավայրն ու պայմանները, որտեղ տեղի է ունենում հաղորդակցումը, արտաքին խթանիչները, հաղորդակիցների անձնային հատկանիշները, ինչպես նաև ուսուցչի մասնագիտական պատրաստվածության ու գործիմացության մակարդակը: Այդ ամենը որոշում են միջանձնային հաղորդակցման ուղիների առանձնահատկությունները և ստեղծում պայմաններ հաղորդակցական ակտիվության ներքին գործոնների դրսևորման ու զարգացման համար:

Կրտսեր դպրոցում հաղորդակցման ուղիների առանձնահատկությունները և արդյունավետությունը պայմանավորված է հիմնականում մանկավարժի հաղորդակցական պատրաստվածությամբ ու գործիմացությամբ, որովհետև նա է հաղորդակցման հիմական կազմակերպիչը:

Մանկավարժական գործընթացում անհրաժեշտ է ոչ միայն միտքը ձևակերպել ու արտահայտել, այլև օգտագործել միջանձնային հաղորդակցման իրականացման բոլոր ուղիների հնարավորությունները՝ ծառայեցնելով դրանք երեխայի անձի ձևավորմանն ու զարգացմանը:

Դպրոցականի խոսքային կարողություններն ունեն երկու հիմնական բաղադրիչներ: Առաջինը երեխայի կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորումն է, երկրորդը խոսքի կիրառությունն է հաղորդակցման մեջ, կամ երեխայի խոսքային ակտիվության հնարավորությունները, որոնք մանկավարժական հաղորդակցման ուսումնասիրության խնդիրն է: Այն բացահայտում է միջանձնային հաղորդակցման մեջ ուղիների ձևավորման հնարավորությունները, վերլուծում

դրանք և կիրառում երեխայի անձի ձևավորման ու զարգացման, ինչպես նաև մանկավարժական գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով:

Այսինքն՝ կրտսեր դպրոցականի արդի պահանջներին համապատասխան անձի ձևավորման ու զարգացման հնարավորությունները պայմանավորված են

մանկավարժի ներգործություններով և երեխայի դրան համարժեք հետադարձ կապով, կամ որ նույնն է, միջանձնային հաղորդակցման իրականացման ուղիներով։

Միջանձնային հաղորդակցման արդյունավետությունը պայմանավորող գործոնների բացահայտումը չի սահմանափակվում միայն մանկավարժի և աշակերտների հաղորդակցական գործունեության ուսումնասիրությամբ։ Միջանձնային հաղորդակցման արդյունավետություն կարող է պայմանավորված լինել նաև սոցիալական միջավայրի տարբեր գործոններով։[5, էջ 15]։

Միջանձնային հաղորդակցման արդյունավետությունը մանկավարժական գործընթացում կարող է պայմանավորված լինել նաև ոչ միայն ուսուցիչ-աշակերտ, այլ ուսուցիչ–ծնող,աշակերտ-աշակերտ և այլ փոխհարաբերությունների առանձնահատկություններով։ Տարրական դպրոցում այդ բոլոր փոխհարաբերությունները փոխկապակցված են մեկի մեջ տեղի ունեցող փոփոխություններն անդրադառնում են նաև մյուսի վրա կամ մեկի առանձնահատկությունները որոշում են նաև մյուսի առանձնահատկությունները։

Կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողությունների ձևավորման ու զարգացման վրա որոշիչ ազդեցություն են ունենում նաև ընտանեկան միջանձնային հաղորդակցական առանձնահատկությունները։ Ընտանեկան միջանձնային հաղորդակցման առանձնահատկությունները պայմանավորված են ծնողների ընդհանուր զարգացման մակարդակով, ընտանիքի սոցիալական վիճակով, կրոնական, մշակութային, արժեքային նախապատվություններով։ Այդ ամենի հիման վրա ձևավորվում է ընտանեկան հաղորդակցման մի մթնոլորտ, որում մեծանում և զարգանում է երեխան։

Դպրոցական տարիքում երեխան հուզական կապերի մեջ է գտնվում ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի հետ։Եվ բնական է,որ երեխայի հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացում որոշիչ են ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի հետ ունեցած հարաբերությունները։

Ինչպես գիտենք ծնողական աջակցությունն անհարժեշտություն է հատկապես առաջին դասարանում սովորող երեխայի համար։ Երբ երեխան նոր է դպրոց գնում, սկզբնական շրջանում նա չի կարողանում ինքնուրույն հաղթահարել ուսումնական գործունեության հետ կապված խնդիրները։ Եթե ծնողները հետևողական չլինեն և

չօգնեն երեխային լուծել այդ խնդիրները, չաջակցեն նրան, ապա երեխան չի կարողանա լավ սովորել:

ԳԼՈՒԽ2.

2.1. Հետազոտության արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը

Դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի ուսումնասիրության նպատակով իրականացրել ենք հարցաթերթիկային հարցում դասարանների ուսուցիչների շրջանում :

ՈՒսուցիչների համար նախատեսված հարցաթերթիկի վերլուծություն

1. Թվարկե՛ք հաղորդակցական կարողություններն ու հմտությունները, որոնց պետք է տիրապետի դպրոցականը.



Տրամագիր 1.Հարցմանը մասնակից ուսուցիչների մեծամասնությունը՝ 64%- ը գտնում է, որ դպրոցականը պետք է տիրապետի խոսքային կարողություններին, այն ավելի հաճախ իրականանում է դպրոցում ուսուցչի հետ համատեղ գործունեության արդյունքում՝ փոխանցելով գիտելիքներ աշակերտին: Եվ այսպես, մանկավարժական

հաղորդակցումն առանձին հասկացություն է, կատեգորիա, իբրև ուսուցչի և աշակերտի միջև արժեքների փոխանակման միջոց և պարտադիր չէ դասի և ուսումնական գործընթացի ժամանակ: ՈՒսուցիչների 36%- ի կարծիքով աշակերտները պարտադիր պետք է տիրապետեն գրելու, կարդալու կարողություններին և հմտություններին, քանի որ գրելով և կարդալով տեսնում, տեսողական հիշողությունն է զարգացնում, և հաղորդակցվելիս կարող է որոշ բաներ խոսքում օգտագործել:

2.Ինչպե՞ս եք դուք ձևավորում հաղորդակցական կարողություններն ու հմտությունները:



Տրամագիր 2. 59 % ուսուցիչների կարծիքով հաղորդակցական հմտությունները և կարողությունները ձևավորվում են երեխային ուսումնական պրոցեսին ներգրավմամբ: Այս դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է ստեղծել սովորողի համար հարմարավետ պայմաններ դասի ժամանակ, դպրոցում, դասարանում: Դպրոցականի հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացումը տեղի է ունենում առավել ակտիվ. նրանք առանց վախենալու, անկաշկանդ դրսևորում են իրենց, չեն վախենում առանց բարդույթների ծաղրի ենթարկվելուց և չընկալվելուց ուսուցչի կողմից: Իսկ ուսուցիչների 41%-ը հաղորդակցական կարողություններ ձևավորելիս գտնում են, որ միայն դասի ու դասագործընթացի ժամանակ հնարավոր չէ

ձևավորել և զարգացնել այդ կարողություններն ու հմտությունները և իրենք օգտագործում են լրացուցիչ ձևեր ու միջոցներ:Նրանց կարծիքով հաղորդակցման միջավայրը առաջին հերթին ընտանիքն է, ընտանեկան մթնոլորտն ու ընտանիքում կրտսեր դպրոցականի հասկացվածությունը: Օրվա մեծ մասը երեխաներն անցկացնում են շրջապատող մարդկանց հետ շփվելով՝ տարեկիցների, ուսուցիչների և այլ մարդկանց հետ: Շփման բովանդակությունը փոխվում է՝ նրա մեջ մտնում են խաղերի հետ կապված թեմաներ, գերակշռում է գործնական շփումը:

3.Կիրառու՞մ եք խմբային աշխատանքը դասապրոցեսում:



Տրամագիր 3.Հարցմանը մասնակից ուսուցիչների 78%-ը դասագործընթացում հաղորդակցական կարողությունների նպատակով կիրառում են խմբային աշխատանք: Խմբային աշխատանքի ամենակարևոր առանձնահատկություններից են խմբի անդամների միջև հաղորդակցումը և շփում դրսևորման բարենպաստ պայմանների ստեղծումը: Անհրաժեշտ է գործել այնպես, որ ակտիվ աշակերտների հետ աշխատելիս անգամ պասիվներն էլ ակտիվանան և աստիճանաբար դառնան առաջատարներ և այդ ընթացքում նրանց մոտ էլ ձևավորվի հաղորդակցական կարողություններ և հմտություններ: Ուսուցիչների 22%-ը չի կիրառում խմբային աշխատանքի մեթոդը, քանի որ ոչ միայն օգուտ չի տալիս այն, այլև հանգեցնում է ոչ

ցանկալի արդյունքների. Նրանց կարծիքով պարտականությունների անարդար բաժանումն ու կատարումը կարող է խմբում ստեղծում է հակասական մթնոլորտ, եւ մրցակցությունը դառնում է անառողջ:Որպեսզի խմբային աշխատանքն արդյունավետ լինի, անհրաժեշտ է խմբի բոլոր անդամների միջեւ ապահովել հանդուրժողական հաղորդակցություն խմբի առջև դրված խնդիրները միասնաբար լուծելու անհրաժեշտության գիտակցում, ինչպես նա բարեկիրթ վարվելաձեւի ձեւավորում:

4.Լսելու կարողությունն ինչ նշանակություն ունի արդյունավետ հաղորդակցման մեջ.



Տրամագիր 4.Վերոհիշյալ հարցին, թե լսելու կարողությունը ինչ նշանակություն ունի, պատասխանել են հետևյալ կերպ. 35%-ը գտնում է, որ լսելը նպաստում է դասի լավ ընկալմանը, կրտսեր դպրոցականները ուշադիր լսելով ուսուցչի խոսքը ավելի արդյունվետ են ընկալում նոր նյութը, 34%-ը կարծում է, որ լսելը ձևավորում է անձնային որակներ և ընթացքում վերադաստիարակվում են աշակերտները: Ուսուցիչների 31%-ի կարծիքով լսելու կարողությունը նպաստում է կարևոր գիտելիքների ձեռք բերմանը:

5.Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան նպաստում է արդյո՞ք դպրոցականների հաղորդակցման կարողությունների ձևավորմանը:

,



Տրամագիր 5. Հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծամասնությունը՝ 55%-ը նշել է, որ **համագործակցային ուսուցման տեխնոլոգիան նպաստում է դպրոցականների հաղորդակցման կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Նրանք նշել են, որ** մեթոդների ընտրության հարցում իրենք ազատ են, սակայն անհրաժեշտ է ճիշտ ընտրել տվյալ դասին համապատասխան ուսուցման մեթոդը, քանի որ ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մեթոդի ճիշտ ընտրությունից և կիրառությունից: Նրանց 24%-ը գտնում է, որ նորագույն տեխնոլոգիաները մասամբ են նպաստում հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, և իրենք հաճախ չեն կիրառում այն: 21%-ը տվել ո՛չ, չի նպաստում,այլ ավելորդ ժամանկի կորուստ է:

Այսպիսով համագործակցային ուսուցման տեխնոլոգիաները մեծամասամբ կիրառվում են ուսուցման գործընթացի բոլոր փուլերում՝ նպաստելով հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

6.Կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիան ինչքանո՞վ է նպաստում դպրոցականների հաղորդակցման կարողությունների ձևավորմանը:



:

Տրամագիր 6. Հարցին թե կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիան ինչքանո՞վ է նպաստում կրտսեր դպրոցականների հաղորդակցման կարողությունների ձևավորմանը ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. Նրանց 57%- պատասխանել է, որ նպաստում է լիովին և գործունեության այս տեսակները խթանում են կրտսեր դպրոցականների ակտիվությունը և հետաքրքրությունը: 25% -ը գտնում է, որ կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիաները բավարար չափով նպաստում են, չի կարելի միայն դրա վրա հիմնվել: Ուսուցիչների 18%-ը ընտրել է մասամբ պատասխանը և ոչ միշտ է կիրառում այն հաղորդակցական կարողությունները ձևավորելիս և զարգացնելիս:

7.Ի՞նչ եք կարծում խաղի կիրառումը արդյունավետ է կրտսեր դպրոցականների հաղորդակցման կարողությունների ձևավորման գործում :



Տրամաբանություն 7.Հարցմանը մասնակցած ուսուցիչների 68%-ը նպատակահարմար է գտնում դասերին հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով կիրառել տարաբնույթ խաղային մեթոդներ՝ ստեղծագործական, խոսքային, ուսումնական, դերային, համակարգչային: Խաղի այս տեսակները խթանում են կրտսեր դպրոցականների ակտիվությունը և հետաքրքրություն, զարգացնում են հաղորդակցական կարողությունները: Նրանց 21%-ի կարծիքով խաղերի կիրառում այդքան էլ արդյունավետ չէ, և իրենք չեն կիրառում: 11%-ը ընտրել է **մասամբ** պատասխանը: Նրանք խաղային տեխնոլոգիաները կիրառում են ստեղծագործական երևակայության և հաղորդակցական կարողությունների զարգացման ընթացքում և պրոբլեմային իրավիճակներում:

8. Դպրոցականի հաղորդակցման կարողությունների ձևավորման գործում խոսքի զարգացման մեթոդական սկզբունքներից, որո՞նք են առավել արդյունավետ:



:

Տրամագիր 8. Ըստ հարցման մասնակից ուսուցիչների՝ դպրոցականի հաղորդակցման կարողությունների ձևավորման գործում խոսքի զարգացման մեթոդական սկզբունքներից, առավել արդյունավետ՝ հաղորդակցական գործունեության սկզբունքը: Նրանցից 26 %-ը նշել է այդ պատասխանը: Այն կիրառելի է ուսուցման գործընթացի բոլոր փուլերում՝ նպաստելով հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: 23%-ը գտնում է, որ հաղորդակցական կարողությունների զարգացման նպաստում է խոսքի տարբեր կողմերի համակցման սկզբունքը: 20%-նշել է խոսքի տարբեր կողմերի համակցման սկզբունքը, երկխոսություն անցկացնել, կարողանալ վարել զրույց, կարողանալ կառուցողական երկխոսություն կազմակերպել, կարողանալ կազմակերպել քննարկում և ղեկավարել այն, կարողանալ մասնակցել կոնֆերանսների, խաղերի և մրցույթների: 16%-ի կարծիքով խոսքային գործունեության դրդապատճառների հարստացման սկզբունքը ևս մեծ դեր ունի հաղորդակցական կարողությունների զարգացման գործում: 15%-ը Ակտիվ խոսքային կիրառում ապահովող սկզբունքն է ընտրել և հիմնավորել: Այսպիսով, ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է, այդ կարողությունների զարգացմանն ուղղված սկզբունքների և միջոցների լիարժեք կիրառությամբ:

9.Բանավոր խոսքի ներկայացման մեթոդներից որոնք են նպաստում դպրոցականի հաղորդակցման կարողությունների ձևավորման :



Տրամագիր 9. Բանավոր խոսքի ներկայացման մեթոդներից որոնք են նպաստում դպրոցականի հաղորդակցման կարողությունների ձևավորման հարցին ուսուցիչները տվել են հետևյալ պատասխանները: Նրանցից 36%-ը գտնում է, որ զրույցի մեթոդը ավելի կիրառելի է ուսուցման գործընթացի բոլոր փուլերում՝ նպաստելով հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: 27%-ը նշել է պատմում պատասխանը, նրանց կարծիքով այն նպաստում է տարրական հաղորդակցական հմտությունների յուրացմանը. աշակերտներին ներառում է դասարանական շփման գործընթացում: Ուսուցիչների 20%-ը նշել է բացատրության մեթոդը:19%-ը՝ բանավեճի մեթոդը:

Այսպիսով՝ դպրոցականների հետ աշխատանքի ընթացքում պիտի կիրառի տարբեր ձևեր, մեթոդներ և հնարներ, որոնք կնպաստեն շփման գործընթացի բոլոր բաղադրիչների զարգացմանը:

10. Հեռավար առցանց ուսուցումը դպրոցականի հաղորդակցման կարողությունների ձևավորման գործընթացում ունի՞ արդյոք թերություններ: Նշեք դրանք:

- Բացակայում է աշակերտի և ուսուցչի միջև անմիջական հաղորդակցումը:
- Դժվար է ստեղծել ստեղծագործական մթնոլորտ աշակերտների խմբում: Իսկ երբ սովորողի կողքին չկա մեկը, որը կարող է ոգևորել նրան, դա կարող է խիստ բացասաբար ազդել ուսուցման գործընթացի վրա:

- Հեռավար սովորելու ցանկություն ունեցողներից ոչ բոլորն ունեն անհատական համակարգիչ և համացանց, դժվար է ապահովել անընդհատ մուտք դեպի տեղեկատվական աղբյուրներ, ինչպես նաև տեխնիկական պատրաստվածություն՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման համար:

11. Ի՞նչ մասնագիտական կոմպետենցիաների պետք է տիրապետի ուսուցիչը իր մասնագիտական գործունեության ընթացքում՝ դպրոցականի հաղորդակցական կարողություն ձևավորումն ապահովելու համար.



Տրամագիր 11 Հարցին թե ի՞նչ մասնագիտական կոմպետենցիաների պետք է տիրապետի ուսուցիչը իր մասնագիտական գործունեության ընթացքում՝ դպրոցականի հաղորդակցական կարողություն ձևավորումն ապահովելու համար հարցմանը մասնակցած ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ: 64%-ը նշել է հաղորդակցական կոմպետենցիաներ պատասխանը: Նրանց կարծիքով հաղորդակցական մշակույթը ենթադրում է ուսուցչի գիտակից մանկավարժական մտածելակերպ և վարքագիծ, այսինքն կողմնորոշում դեպի մարդասիրական արժեքներ, հոգեբանական շփման, հաղորդակցման վարքի ու նորմերի կանոնների, լեզվական նորմերի համակարգի իմացություն, հաղորդակցման զարգացած կարողություններ և հմտություններ: 25%-ը գտնում է, որ ուսուցիչը պետք է իմանա և տիրապետի համակարգչային տեղնոլոգիաներին:16%-ը կարծում է, որ պետք է ուսուցիիչը տիրապետի այնպիսի կոմպետենտցիաների, որ կարողանա հաղթահարել կոնֆլիտային իրավիճակները, և ապահովի խաղաղ միջավայր:

Այսպիսով հարցման ընթացքում իրականացրած ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում եկանք այն համոզման, որ նպատակահարմար է տարբեր առարկաների դասերին՝ հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով կիրառել տարաբնույթ խաղային մեթոդներ՝ ստեղծագործական, խոսքային, ուսումնական, դերային, համակարգչային: Գործունեության այս տեսակները խթանում են դպրոցականների ակտիվությունը և հետաքրքրությունը: Նրանք հատկապես հաճույքով են կատարում այն առաջադրանքները, որոնք մատուցվում են տեղեկատվական տեխնոլոգիաներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Խոսքի հաղորդակցական կարողությունների ձևավորումը» թեմայի շուրջ մասնագիտական գրականության վերլուծությունը, աշակերտների, ուսուցիչների և ծնողների շրջանում մեր իրականացրած հարցաթերթիկային հարցումների, զրույցների, խաղերի և վարժությունների արդյունքները թույլ են տալիս մեզ հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և սոցիալականացմանը նպաստում է հաղորդակցական առանձնահատկությունների իմացությունը՝ պայմանավորված իրենց հետաքրքրություններով, պահանջմունքներով և հակումներով:
2. Հարցաթերթիկների վերլուծությունից պարզ դարձավ, որ նպատակահարմար է տարբեր առարկաների դասերին՝ հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով կիրառել տարաբնույթ խաղային մեթոդներ՝ ստեղծագործական, խոսքային, ուսումնական, դերային, համակարգչային: Գործունեության այս տեսակները խթանում են կրտսեր դպրոցականների ակտիվությունը և հետաքրքրությունը և ուղղված են հաղորդակցական դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարելուն:
3. Մեր մշակած խաղ-վարժությունների կիրառումը նպաստեց կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, երեխաները սովորեցին ձևավորել հիմնական միտքը, վերլուծել բովանդակությունը, միևնույն միտքն արտահայտել տարբեր միջոցներով, համապատասխանեցնել միտքը, ժեստերն ու դիմախաղն ըստ հաղորդակցման բովանդակության, հստակ

արտահայտել հուզական տեղեկատվությունը, գնահատել հաղորդակցի միտքն ու պատշաճ արձագանքել նրա խոսքին:

4. Վերլուծելով դպրոցականի հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և հարցաթերթիկներում այդ խնդրին վերաբերող հարցերի պատասխանները, տեսանք, որ տեղեկատվական տեխնոլոգիաներով կազմակերպված դասերը բարձրացնում են ուսումնական գործընթացի արդյունավետությունը, նպաստում են ուսումնական նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրության առաջացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ալեքսանյան Ա. Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում: Երևան: ԵՊՀ հրատ.: 2015: 264 էջ:

2.Թորոսյան Կ., Թերզյան Գ., Խաչատրյան Հ., Խոսք և հաղորդակցություն: Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար: Երևան 2011 թ. 96 էջ:

3.Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ.- Եր: «Լինգվա», 2009, 297 էջ :

4.Թոփուզյան Ա., Ժամանակակից ուսուցչին ներկայացնող պահանջները, «Մանկավարժական միտք» N 3-4, 2012 էջ 12-17

5.Լեոնտև Ա. Ա., «Մանկավարժական հաղորդակցում»: Երևան 1982, 79 էջ:

6.Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար/ Կազմ.՝ Վ.Ս. Կարապետյան, Ս.Ռ. Գևորգյան, Ա.Ս. Բերբերյան, Ռ.Հ. Պետրոսյան, Հ.Վ. Խաչատրյան.-Եր.: Լիմուշ, 2017, էջ 312

6.Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ա., Մանկավարժական հաղորդակցում Երևան 2010թ. 204 էջ:

7.Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան 2004:

8.Միքաելյան Լ, Տարրական դպրոցի ուսուցչի հաղորդակցման մշակույթի բաղադրիչները, «Մանկավարժություն¦ ամսագիր», N 8, 2011 թ.,էջ 18-23:

9.Մխիթարյան Ս., Մանկավարժական հաղորդակցման յուրահատկությունները, Նախաշավիղ ամսագիր, 6. 2011թ. էջ 20-23:

10.Սիսյան Ս. Բ., Խոսքի հաղորդակցային ոճերը, Գիտական աշխատանքների հոբելյանական ժողովածու՝ նվիրված Հայբուսակ համալսարանի հիմնադրման 20 ամյակին, Ե., 2011, էջ 204

11.Аксенова Г. И. Психология и педагогика становления субъекта. Москва- Рязань: РИНФО, 1999, стр. 210

12.Бодалев А. А. Психология общения, М., Издателство МОДЕК МПСИ 2007 стр.10